

THE NEW ARMENIA

Օտար երկիրների ստակ, օտար ազգերու առջև հայ անունը պանծալի հանդիսացնելու համար՝ հայ եռանդուն գործիչներու ճիգերը ստուգելի ամեն դրուսաթիքի և քաջալերի արժանի են:

Մենք առաջադրած ենք հնգզեկստէ արձաւ նագրել թուր սոյն օտարալիզու պարբերականներու հրատարակիչները և հրատարակութիւնները, որոնք հայ ազգին նուիրական իրաւունքները կը պաշտպանեն, հայու վերջերուն սպեղանին կը պատրաստեն և նոր փրկութիւնը կը ներթեն:

The New Armenia երկշարթաթերթի գործունէութիւնը ստուգելի բարձր է Սմերիկայի և Անգլիասոս ամեն ազգերու հանդէպ: Մեծագիր, ընտիր և զինուղիւն թուրթի վրայ 16 էջերով և բազմաթիւ ընտիր պատկերներով կը հրատարակուի ան՝ Նիւ Եորքի մէջ՝ 1915ի զեկտեմբեր 1էն սկսեալ: Ուրոզ՝ 1916ի հատորը պատկանելի բովանդակութեամբ գիրք մը կը ձևացնէ: Սա կը շարունակուի կանոնաւորապէս լոյս տեսնել ներկայ տարուան մէջ: Պատմական, Ազգային եկեղեցական, Ազգային գրական, բանաստեղծական, տեղագրական, ընթացիկ և ժամանակակից խնդիրներու ցուցահանդէս մը կը կազմէ՝ բովանդակելով նաև մաքուր սպասքուած ձոյն և գոյոր պատկերներ, որոնցմէ ոմանք մեր հրատարակած Գեղունիներէ, Բնայնարչիկ բաւարանէ, Ընտիր Հայկազունէ արտասպառած են: Հոն յօդուածներ և թարգմանութիւններ կը գետեղեն Հայաստանէր Alice Stone Blackwell Ամերիկուհին, Rev. Dr. James L. Barton.-Miss. Emily J. Robinson Անգլուհին.-Rev. Charles F. Dole.-Eduard H. Clement.-Prof. Wilbur Henry Siebert.-Prof. F. C. Conybeare.-W. Lew. Williams, Կայն, Կայն, Իսկ մեր ազգէն, Prof. G. Thoumaian,-Diana Agabeg.-Apar.-Zabelle C. Boyajian.-Prof. G. Hagopian.-Հաւանգիրներէն թարգմանուած են Հ. Ալիշանի, Պէրիկիթայեանի, Վարուժանի, Պատկանեանի, Սիմանգույի, Պետրոս Դուրեանի, Կայն ակունաւոր Հայ բանաստեղծներու ընտիր երկերէն կտորներ: Եւ մինչդեռ կը կործէինք թէ սոյն Պարբերական թերթը կը վայելէր աշխուղութիւնը Հ. Բ. Բ. Միւրթեան, խմբագրապետ Արշակ Մահալեան մեզ կը գրէ թէ ընդհակառակն սեպական ճիգերով կը հրատարակուի «The New Armenia»ի Publishing Companyի կողմանէ:

Ձայն գիտնալով՝ մեղի պարտք կը համարինք համառօտելով արտասպել հետեւեալ ծանուցագիրը որ խմբագրութեան հասած էր:

Լօրտ Ճէյմս Պրայս, Նշանաւոր Հայաստանը կը գրէ.

«Շատ ուրախ եմ որ Միացեալ Նիւհանդներու Հայերը ձեռնարկներ են հրատարակել պարբերականը գոր յիշել էիք... Բալուզութիւն կը մաղթեմ ձեր ջանքերուն, որոնցմով Հայաստանի կացութիւնը կը ծանօթացնէք աշխարհի»:

Երբեք համարարանի ուսուցչապետներէն մէկը Բլաթ. Ճ. Փ. Սիլիք, հետեւեալ գրած է.

«Մեծ հետաքրքրութեամբ կարդացեր եմ The New Armeniaի թիւերը, ու վստահ եմ թէ շատ բան պիտի սորվիմ զայն ստանալով: Սրտագին յայտագրութիւն կը մաղթեմ The New Armenia զովելի և խիստ ընտիր ձեռնարկ մըն է: Կը յուսամ թէ այս տարին չըրացած, հայերու վիճակը արմատապէս պիտի բարեփոխուի»:

Տր. Ճէյմս Լ. Պարթընէն ուլ հետագան. «Շատ անհրաժեշտ է The New Armenia ընդարձակօրէն տարածել այս երկրին մէջ, որպէս զի հայերուն կացութիւնը ըստ արժանաւորն բացատրուի»:

Հայ-Ամերիկեան Քաղաքացիներու Շիքակոյի Սիւմբըր, որուն նախագահն է Տիար Կ. Թ. Փոչման, և քարտուղարը՝ Տիար Յովհ. Պէղազեան, գրած էր.

«Մեր Անուամբ յայդոած է Ամերիկեան Բանձնախումբ մը կազմել հայկական շահերը պաշտպանելու նպատակով, ուստի խորհեցանք, թէ լաւ պիտի ըլլար եթէ անոր անդամները կանոնաւորաբար The New Armenia ստանային 1916 տարուան միջոցին: Մը. Բիւֆօլդ Ք. Տաուզ, Բանձնախումբին նախագահը, շատ շահեկան ու նպատակայարմար կը գտնէ The New Armeniaն: Մը. Խաղբար Հ. Քիշմընթ, Ամերիկայի ամենէն հեղինակաւոր խմբագրապետներէն մէկը, կը գրէր.

«Ես առաջին անգամ Հայկական խնդրով հետաքրքրուեցայ շնորհիւ Pro-Armeniaին: Հայկական շահերը պաշտպանելու միակ միջոցն է անկախ թերթ մը ունենալ: The New Armeniaն իսկական մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ Հայ Ազգին ու արժանի է անժխտ աջակցութեան»:

Այն ջնջին գումարը, որ իբրեւ բաժնեգին կը ծախուի The New Armeniaի համար, յաճախ մանաների հատի նման բերապաւ.

տիկ արդիւնք կ'արտադրէ Ամերիկայի բաւարարական ու քաղաքական շրջանակներուն մէջ ի նպաստ Հայերու:

ԿՈՉՆԱԿԻ Յունիս 17 համարին մէջ կը կարդալուք:

« Ամերիկեան Հայաստաստ Յանձնախումբին քարտուղարը՝ Հայ կարօտեալներու ի նպաստ համեստ գումար մը նուէր ընդունենցաւ քանի մը օր առաջ Ամերիկացի անձնութեան քարեկամէ մը: Յիշեալ Ամերիկացին՝ որ իր անունը կ'ուզէ ծածուկ պահել՝ Հայաստանի կարօտեալներու տառապեալ վիճակին վրայ յօժ և կարգացած ըլլալով... կ'երթայ Յանձնախումբին գրասենեակը, և Հայոց մասին հարցուփորձ ընելէ ետքը՝ կը յայտարարէ իր փափաքը, թէ կ'ուզէ 5000 տոլարի դուամբ մը նուիրել այդ նպատակին համար... Մարդը ազդուելով տրուած տեղէն կուծիւններէն, կը նստի ու 18,000 տոլարի չէք մը գրելով կը յանձնէ քարտուղարին»....

Այս բարերար Ամերիկացին The New Armenia-ի միջոցաւ էր որ Հայերով հետաքրքրուեցաւ:

Կը հաշուուի, թէ 100,000 Հայեր կան Ամերիկայի մէջ: Անոնցմէ գէթ 10,000ը նիւթական կարողութիւն և մտաւորական հասկացողութիւն ունին բաժանորդագրուելու The New Armenia-ին կամ զայն նուէր զրկելու օտար կորուստ անձանց ու կազմակերպութիւններու:

Արդ քանի՞ Հայեր կը կարծէք թէ բաժանորդագրուած են The New Armenia-ի, կամ նուէր զրկած զայն. 800, միայն 800: Զանցառելի թիւ մը, այնպէս չէ՞:

Այն Գերմանները զորս մենք շարունակ կ'արհամարհենք, ներկայ աշխարհաւոր պատերազմէն ի վեր երկրտաանեակ մը Անգլիերէն թերթեր հիմնեցին Ամերիկայի մէջ Գերմանիոյ դատը պաշտպանելու նպատակով: Այս միայն այսչափ, այլ ամեն մէկ Գերմա-

նացի կարծես գործակալ մը դարձաւ զանոնք ծաւալելու:

Զանգուածեղ Գերմաններ, 40-50 տարեկան հասակի մէջ, այդ թերթերը կը ծախեն երկաթուղիի կայարաններու դուռը կամ քաղաքներու նշանաւոր պողոտաներու անկիւնը:

Գերմանները արհամարհելի են, անտարակոյտ, բայց ինչպէս կ'ըլլայ որ անոնք իրենց ազգային շահերը պաշտպանելու տեսակետով զմեզ կը գերազանցեն:

Կը պատմուի, թէ ծովակալ մը 25 տէնթով կը վարձատրէ նաւազ մը, որ իր պատին ու կեանքը փրկած էր: Երբ նաւազը սաստիկ կը զայրանայ ու կը վրդովուի, անոր ընկիւնները կ'ըսեն.

« Մի՛ զայրանար, ծովակալը քենէ աւելի ազէ՛կ գիտէ իր պատիւին ու կեանքին գինը»:

Միեւնոյն հեղեարանութեան նշաւակ պիտի չըլլան Ամերիկացիները եթէ շարունակեն իրենց դատաւարտելի ժառութիւնը հանդէպ The New Armenia-ի:

Թերես այս տողերը կարգաւոր յուշուիս ու բազմապնդու.

« Աւա՛ղ, մեր ազգը ունէ՛ օգտակար՝ ձեռնարկ չի քաջալերեր»:

Բայց ո՛վ է Մեր Ազգը՞:

Եթէ մենէ իւրաքանչիւրը գնահատէ օգտակար ձեռնարկ մը, այն ատեն «մեր ազգ»ը, որ քեզի ու ինծի նման անհատներէ կը բաղկանայ, կատարած կ'ըլլայ իր պարտաւ կանոթիւնը:

Ուստի փոխանակ «մեր ազգ»ը մեղադրելու, անվիտպէս նուէրդ կամ բաժնեգինդ զրկէ The New Armenia-ի:

The New Armenia-ի տարեկան բաժնեգինն է \$1. 2,00 Ամերիկայի մէջ, \$1. 2,50՝ արտասահմանի:

THE NEW ARMENIA

949 Broadway,

U.S.A. NEW YORK, N. Y.

1917ի ԲԱԶՄԱՎԷՊԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Գերյ. Տ. Կ. Դիրուկեան, Աղբուր
Արթ Տ. Ս. Քահ. Սարգսեան, Տաքքա
Մեծ. Պ. Մ. Կիւրեղեան, Գահիրէ
Մեծ. Պ. Յ. Ղազիկեան, Աղբուր
Մեծ. Տօթ. Լ. Շաքարձուսեան, Բարիդ
Մեծ. Պ. Յ. Ուլուհանեան, Մարտի
Մեծ. Պ. Մ. Թիմոնեան, Ռուսով. Տոմ

Մեծ. Պ. Տ. Կիւրեղեան, Էքզիկիստաթ
Մեծ. Պ. Յ. Պէրպէրեան, Պոսթոն
Մեծ. Պ. Մանուկեան, Տիրուր
Մեծ. Յ. Ղ. Մարթէն, Ռուսար Միւս
Մեծ. Ե. Գ. Զէրչուի, Բեդիքսոն
Մեծ. Հ. Գ. Ղազարոսեան, Միլան
Մեծ. Մ. Գորոքեան, Ս. Բոյոյ